ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 4, 1960 Общественные науки

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԱԴԻՐԲԵՋԱՆԻ 40-ԱՄՅԱԿԻՆ

Զ. Խ. Իբրահիմով

ԱՌՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ

Ադրբեջանական ՍՍՌ-ի աշխատավորությունը և ողջ սովետական ժողովուրդը 1960 թ. ապրիլին հանդիսավոր նշում են Ադրբեջանի Կոմունիստական պարտիայի և Ադրբեջանական ՍՍՌ-ի կազմակերպման 40-ամյակը։

Սովետական իշխանության հաղթանակն Ադրբեջանի ժողովրդի պատմական բախտում արմատական շրջադարձ հանդիսացավ։ Այն նշանավորեց Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի գաղափարների նոր փայլուն հաղթանակը՝ մեր երկրի աշխատավորությանն ազատագրելով սոցիալական և ազգային ճնշումից։

Մինչ Սովետական իշխանության հաղթանակը Ադրբեջանում, ռուսական իմպերիայի այդ գաղութային հետամնաց ծայրամասերից մեկում, գոյություն ուներ խիստ կոնտրաստ՝ մի կողմից իր պրիմիտիվ գյուղատնտեսական տեխնիկայով հետամնաց գյուղի և մյուս կողմից բարձր զարգացած ինդուստրիալ կենտրոնի, Բաքվի միջև, որը ներկայացնում էր խոշոր արդյունաբերական •ազիս ոչ միայն Ադրբեջանում, այլ նաև ողջ Անդրկովկասում։ Փետրվարյան ռևոլյուցիայի նախօրյակին Ադրբեջանի բնակչության 78% զբաղված էր գյուղատնտեսությամբ։ Գյուղում կապիտալիստական հարաբերությունները թույլ էին զարգացած։ Ադրբեջանում առկա էր մի կողմից քայքայվող, բայց դեռևս ուժեղ կերպով պահպանված ֆեոդալական հարաբերությունների և ավատական մնացուկների, իսկ մյուս կողմից թույլ զարգացած կապիտալիստական հարաբերությունների միահյուսումը։ Չնայած կապիտալիստական հարաբերությունները դանդաղ էին ներթափանցում ադրբեջանական գյուղը, այնուամենայնիվ XX դարի սկզբին տեղի էր ունենում գյուղացիության դասակարգային շերտավորումը՝ մի կողմում առաջանում էր սակավաթիվ գյուղական բուրժուազիան, մյուս կողմում՝ պրոլետարականացող մասսա։ 1917 թ. շեմին ադրբեջանական գյուղում չքավորական տնտեսությունները կազմում էին 54%, որոնք կամ բոլորովին հողազուրկ էին, կամ ունեին 1 հեկտարի հասնող ցանքատարածություն, միջակ տնտեսությունները 34% (մեկից մինչև 4 հեկտար ցանքատարածությամբ) և 8,6% ունևոր և կուլակային տնտեսություններ (4 հեկտարից ավելի ցանքատարածությամբ)[1]։ Ցարիզմի և կալվածատերերի տնտեսական տիրապետության հիմքը Ադրբեջանում պետական և խանաբեգական հողատիրությունն էր։ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին տերությանը, կալվածատերերին-խաներին-բեգերին, մեչիտներին և

[1] К XVIII съезду ВКП(б). Основные показатели развития социалистического строительства в Азербайджанской ССР, Азнархозучет, Баку, Библиотека Азербайджанского филиала ИМЛ.

եկեղեցիներին պատկանում էր ամբողջ հողի 56,2%, իսկ գյուղացիներին՝ 1,8%[2]։ Կալվածատիրական դաժան ճնշումը, հողազրկությունն ու սակավահողությունը, ստրկացուցիչ վարձակալությունը, ամեն տիպի ծանր հարկերը, վաշխառությունը ծանր լծի նման ընկած էին ադրբեջանական գյուղացիության վրա՝ նրան դատապարտելով բայքայման ու մուրացկանության։ Չնայած Ադրբեջանի մեծ մասը չէր հասցրել անցնելու արդյունաբերական կապիտալիզմի ստադիան, սակայն Ադրբեջանի հետամնաց ֆոնի վրա՝ Ռուսաստանի կապիտալիստական էկոնոմիկայի ազդեցության տակ, XIX դարավերջից սկսած արդեն որոշակի առանձնանում էր նավթային Բաքուն, որը շուտով դառնում է Ռուսաստանի ամենախոշոր արդյունաբերական կենտրոններից մեկը և ամենախոշոր արդյունաբերական և պրոլետարական կենտրոնը Կովկասում։ 1913 թ. Բաքվում և նրա շրջաններում հաշվվում էր շուրջ 110,000 բանվորներ։ Հենց Բաքուն դարձավ կապիտալիզմի հակասությունների հանգուցակետ և արենա այն ռևոլյուցիոն փոթորիկների, որոնք պայթեցին XX դարասկզբին։

Ադրբեջանում պրոլետարիատը սկզբից ևեթ ձևավորվեց որպես բազմազգի պրոլետարիատ, որի եղբայրական ընտանիքի կազմում համախմբված էին տարբեր ազգությունների ներկայացուցիչներ՝ ադրբեջանցիներ, ռուսներ, հայեր, վրացիներ, դաղստանցիներ։ 1913 թ. Բաքվի պրոլետարիատի կազմում հաշվվում էին 41,1% ադրբեջանցիներ, 27,5% ռուսներ, 17,7% հայեր, 6,0% դաղստանցիներ և 7,7% այլազգիներ։

Ադրբեջանի բանվոր դասակարգի դրությունը բացառիկ ծանր էր։ Բանվորները կապիտալիստների և ցարական իշխանությունների կողմից ենթարկվում էին հրեշավոր շահագործման։ Բաքվի նավթահորերում և գործարաններում աշխատանքային օրը հասնում էր 12—13 ժամի, իսկ մետաքսագործական ձեռնարկություններում և պղնձաձուլական գործարաններում՝ 13—14 ժամի։ Անասելի ցածր էր աշխատավարձը և բանվորներն ու նրանց ընտանիքները կիսաքաղց գոյության էին դատապարտված։ Ուժերից վեր, արտաժամյա աշխատանքները, բնակարանային կոշմարային պայմանները, աշխատանքի պաշտպանության բացակայությունը, մուրացիկ կյանքը առաջ էին բերում մասսայական հիվանդություններ, արագ հյուծում և մահացության արտակարգ բարձր տոկոս։

Ադրբեջանի աշխատավորության առանց այն էլ ծանր վիճակը ավելի էր խորանում ինքնակալության սոցիալական և ազգային-գաղութային դաժան ճնշմամբ։ Ադրբեջանի պրոլետարիատը, գյուղացիությունը և աշխատավոր ինտելիգենցիան, ինչպես և Ռուսաստանի ծայրամասային այլ ազգությունների աշխատավորները, ոչ մի քաղաքական իրավունք չունեին։ Ցարական կառավարությունը լռեցնում էր ժողովրդական մասսաների յուրաքանչյուր նախաձեռնություն և ակտիվություն, հետապնդում էր ադրբեջանական կուլտուրան և լեզուն։ Ցարիզմը միտումնավոր կերպով պաշտպանում էր ծայրամասերի ավատա-ֆեոդալական ճնշումը, աշխատավորությանը գիտակցաբար պահում էր խավարի ու տգիտության մեջ։ Մինչ սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակը Ադրբեջանի չափահաս բնակչության 90% անգրագետ էր։

Ադրբեջանի բանվոր դասակարգի և գյուղացիության նյութական և իրավական անտանելի պայմանները պայմանավորում էին ցարիզմի, կալվածա-

[2] „20 лет Азербайджанской ССР. Статический сборник", Баку, 1940, стр. 44

տերերի և բուրժուազիայի դեմ նրանց պայքարի վերելքը՝ հանուն իրենց սոցիալական և ազգային ազատագրության։ Ռուսական առաջին ռևոլյուցիայի ժամանակ, ստոլիպինյան ռեակցիայի տարիներին, ռևոլյուցիոն նոր վերելքի և առաջին համաշխարհային պատերազմի շրջանում Ադրբեջանի բանվոր դասակարգը և աշխատավոր գյուղացիությունը՝ բոլշևիկների ղեկավարությամբ՝ մասնակցում էին ինքնակալության, կալվածատերերի և կապիտալիստների դեմ մղվող դասակարգային պայքարին՝ Ռուսաստանի ռևոլյուցիոն շարժման տարեգրության մեջ գրելով փայլուն էջեր։ Ոչ միայն Ադրբեջանի, այլ միաժամանակ և ողջ Անդրկովկասի աշխատավորության ռևոլյուցիոն պայքարի ավանդարդում գնում էր Բաքվի բազմազգ պրոլետարիատը՝ Ռուսաստանի պրոլետարիատի փորձված ջոկատներից մեկը։

Փետրվարյան բուրժուադեմոկրատական ռևոլյուցիայի հաղթանակը Ռուսաստանում և ցարիզմի տապալումը Ադրբեջանի աշխատավորության մեջ առաջացրին քաղաքական ակտիվության և ստեղծագործական էներգիայի նոր պոռթկում՝ հանուն իրենց սոցիալական և ազգային ազատագրության։

Ռևոլյուցիայի առաջին իսկ օրերից դուրս գալով ընդհատակից և անցնելով քաղաքական բացահայտ գործունեության, Ադրբեջանի բոլշևիկյան կազմակերպությունները՝ զինված լենինյան «ապրիլյան թեզիսներով»՝ հսկայական աշխատանք ծավալեցին հաշտվողական և բուրժուանացիոնալիստական պարտիաների չեզոքացման ուղղությամբ՝ մասնային նվաճելով ռևոլյուցիայի կողմը։ Ադրբեջանի բոլշևիկները, ինչպես և ողջ պարտիան, բացահայտելով ժամանակավոր կառավարության և նրա տեղական օրգանների քաղաքականության իմպերիալիստական բնույթը, համբերատարությամբ և սիստեմատիկաբար մասսաներին բացատրում էր, թե քանի իշխանությունը գտնվում է բուրժուազիայի ձեռքին, իսկ սովետներում տիրություն են անում համաձայնողականները, աշխատավորությունը չի ստանա ոչ խաղաղություն, ոչ հաց, ոչ ազատություն։

Ադրբեջանցի աշխատավորներին ռևոլյուցիոն մոբիլիզացման գործում, ՌՍԴԲ(բ)Պ Բաքվի Կոմիտեի ղեկավարությամբ նշանակալից աշխատանք էր տանում «Հումմեթ» կազմակերպությունը, որը Բաքվի բոլշևիկյան կազմակերպության բաղկացուցիչ մասն էր։ 1917 թ. գարնանը հարավային Ադրբեջանի աշխատավորության մեջ ռևոլյուցիոն աշխատանք տանելու, իմպերիալիզմի և ներքին ռեակցիայի դեմ իրենց պայքարում Իրանի աշխատավոր մասսային օգնելու համար Բաքվում կազմակերպվում է սոցիալ-դեմոկրատական «Ադալյաթ» կազմակերպությունը։

1917 թ. գարնանը և ամռանը բոլշևիկների ղեկավարությամբ ծավալվում են Ադրբեջանի բանվորների ռևոլյուցիոն շարժումները, որն ուղղված էր կապիտալիստների տիրապետության և բուրժուական շահագործման դեմ։ Ադրբեջանի պրոլետարիատը, առաջին հերթին Բաքվի պրոլետարիատը, համառորեն պահանջում էր 8-ժամյա բանվորական օր, բանվորական վերահսկողություն արտադրության և մթերքների բաշխման վրա, կոլեկտիվ պայմանագրերի կնքում և այլն։ Բաքվի պրոլետարիատի կարևոր ռևոլյուցիոն ելույթը հանդիսացավ 1917 թ. սեպտեմբերյան ընդհանուր գործադուլը, որը եղավ Անդրկովկասի աշխատավորության ռևոլյուցիոն պայքարի լուրջ խթանը։

Ադրբեջանում ծավալվում էր գյուղացիական շարժումներ ընդդեմ կալվածատիրական ճնշման՝ հանուն հողի և ազգային ազատագրական շարժում-

ներ՝ ազգային իրավահավասարության համար։ Բոլշևիկները ձգտում էին գյուղացիական և ազգային ազատագրական շարժումները միացնել պրոլետարիատի սոցիալիստական շարժման հետ։

Պայքարը սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի համար Ադրբեջանում հանդիսանում էր ողջ Ռուսաստանի պրոլետարական ռևոլյուցիայի բաղկացուցիչ ու անբաժանելի մասը։ Ռևոլյուցիայի պրոցեսի ընդհանուր օրինաչափությունները Ադրբեջանում իրենց հիմքում նույնն էին, ինչ որ ողջ Ռուսաստանում։ Սակայն Ադրբեջանում պայքարը հանուն պրոլետարական ռևոլյուցիայի ունեցել է որոշ առանձնահատկություններ՝ պայմանավորված տեղական տնտեսական, քաղաքական և ազգային զարգացման յուրօրինակությունններով։ Առանձնահատկություններից մեկը դա Ադրբեջանի և ընդհանրապես Անդրկովկասի բնակչության ազգային կազմի բազմատարրությունն էր։ Անդրկովկասի տիրապետող դասակարգերը և նրանց քաղաքական պարտիաները՝ մուսավաթիստները, դաշնակներն ու մենշևիկները, իրենց տիրապետությունն ամրապնդելու և լայն մասսաների ուշադրությունը ռևոլյուցիոն պայքարից շեղելու նպատակով վարում էին շովինիստական սանձարձակ պրոպագանդա՝ նպատակ ունենալով քայքայել Անդրկովկասի պրոլետարիատի և ողջ աշխատավորության ինտերնացիոնալ միասնությունը։ Սոցիալիստական ռևոլյուցիայի համար մղվող պայքարի մյուս առանձնահատկությունն այն էր, որ արդյունաբերական Բաքվի և նրա առաջավոր պրոլետարիատի կողքին Ադրբեջանում գոյություն ուներ հետամնաց գյուղը, որում տիրապետող էին ֆեոդալական հարաբերությունները։ Այդ ամենը բարդացնում էր սոցիալիստական ռևոլյուցիայի համար մղվող պայքարը, դժվարացնում մասսաների ռևոլյուցիոն մորիլիզացումը և Բաքվի պրոլետարիատի դաշինքի ամրապնդումը ադրբեջանական աշխատավոր գյուղացիության հետ, որը պետք է հանդիսանար պրոլետարական ռևոլյուցիայի հաղթանակի ապահովման վճռական ուժը Ադրբեջանում։

Սոցիալիստական ռևոլյուցիայի համար պայքարը Ադրբեջանում, ինչպես նաև Հայաստանում ու Վրաստանում, բարդանում էր նաև նրանով, որ բանվորների և գյուղացիների ռևոլյուցիոն ճակատին դիմագրավ էին լինում ռուսական իմպերիալիզմի և տեղական բուրժուանացիոնալիստական կոնտրռևոլյուցիայի միավորված ուժերը։ Բոլոր դժվարությունների հաղթահարման համար բոլշևիկները և Ադրբեջանի բանվոր դասակարգը հերոսական ճիգեր էին գործադրում։ Ադրբեջանի բոլշևիկները ստիպված էին վճռական ու անհաշտ պայքար մղել մի կողմից մանրբուրժուական, հաշտվողական պարտիաների էսերների և մենշևիկների դեմ, մյուս կողմից բուրժուանացիոնալիստական պարտիաների և մուսավաթիստների, դաշնակների և այլ ամեն գույնի ու երանգի նացիոնալիստների դեմ, որոնք ձգտում էին մասսաների գիտակցությունը թունավորել նացիոնալիզմի թույնով։ Ադրբեջանի և Անդրկովկասի բոլշևիկները աշխատավոր մասսային դաստիարակում էին պրոլետարական ինտերնացիոնալիզմի և ժողովուրդների բարեկամության ոգով։

Ադրբեջանի աշխատավորական մասսաներին Կոմունիստական պարտիայի լոզունգների շուրջը համախմբելու ուղղությամբ նշանակալից աշխատանք էին տանում Ս. Շահումյանը, Մ. Ադիզբեկովը, Ա. Ջափարիձեն, Ն. Նարիմանովը, Ի. Ֆիոլետովը, Ա. Միկոյանը, Բ. Սարդարովը, Մ. Իսրաիլբեկովը, Մ. Այդին-

լեկովը, Յա. Զևինը, Մ. Մամեդյարովը, Մ. Բ. Կասումովը, Ի. Անաշկինը, Դ. Սուլթանովը, Ս. Մ. Էֆենդիևը, Ա. Մռավյանը, Մ. Պլեշակովը, Դ. Բունյադ-զադեն և բոլշևիկյան պարտիայի շատ այլ ականավոր գործիչներ։

Կոմունիստական պարտիայի և նրա հանճարեղ առաջնորդ Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ ռուսական հերոսական բանվոր դասակարգի և չքավորա-դույն գյուղացիության հաղթանակը 1917 թ. Հոկտեմբերյան սոցիալիստական ռևոլյուցիայում, ինչպես Ռուսաստանի այլ ծայրամասերում, այնպես էլ Ադրբեջանում ոգևորեց աշխատավորությանը՝ ելնելու վճռական պայքարի՝ հանուն Սովետական իշխանության։

Ադրբեջանի բանվոր դասակարգը, նրա փառապանծ ավանգարդ Բաքվի բազմազգի պրոլետարիատը՝ սերտ դաշնակցած մեր երկրի ողջ աշխատավո-րության հետ՝ ռուսական բանվոր դասակարգի հետքերով, առաջիններից մեկը եղավ, որ ոտք գրեց Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի ուղին։ Մեծ հոկտեմբերի առաջին իսկ օրերից Բաքուն դարձավ Ադրբեջանի և ողջ Անդրկովկասի սոցիալիստական ռևոլյուցիայի առաջակետը և դրոշակակիրը։ 1917 թ. հոկտեմբերի 31-ին, մուսավաթիստների, դաշնակների, մենշևիկների, էսերների հակառևոլյուցիոն պարտիաների կատաղի դիմադրության պայման-ներում, պրոլետարական Բաքվում հռչակվեց Սովետական իշխանություն։ Բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավարությամբ Սովետական իշխա-նությունը Բաքվում 1917 թ. վերջերին և 1918 թ. սկզբներին զգալի չափով ամրապնդեց իր դիրքերը։

Հոկտեմբերյան սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակը կատաղի ատելությամբ դիմավորեցին Անդրկովկասի շահագործող դասակարգերը և նրանց քաղաքական պարտիաները։ Եթե Հոկտեմբերյան ռևոլյուցիայի առա-ջին իսկ օրերից հաջողվեց Բաքվում հաստատել Սովետական իշխանություն, ապա այլ ձևով դասավորվեց պայմանները Ադրբեջանի մնացած մասում, ինչպես և Վրաստանում ու Հայաստանում, որտեղ իշխանությունը հափշտակել էին մուսավաթիստները, մենշևիկները և դաշնակները։ Հենվելով միջազգային իմպերիալիզմի աջակցության վրա և դաշինք կնքելով իրար հետ, մու-սավաթիստները, մենշևիկները և դաշնակները 1917 թ. նոյեմբերի կեսերին Թբիլիսիում ստեղծում են հակասովետական կոալիցիան՝ Անդրկովկասյան հա-կառևոլյուցիոն կոմիսարիատը, իսկ այնուհետև կովկասյան սեյմը։ Ադրբեջա-նի, Հայաստանի և Վրաստանի աշխատավորական մասսաները համառ ու ծանր պայքար էին մղում Անդրկովկասի հակասովետական կոալիցիայի դեմ։ Այդ պայքարի ավանգարդում գնում էր ռևոլյուցիոն պրոլետարական Բաքուն, որը բարձր էր պահում Սովետական իշխանության դրոշը և Անդրկովկասի պրոլե-տարիատի համար ծառայում որպես «վարակիչ օրինակ» ու «կենդանի փարոս, որ լուսավորում է ուղին դեպի սոցիալիզմ» (Ի. Վ. Ստալին)։ Բոլշևիկների անձ-նազոհ պայքարը՝ հանուն Սովետական իշխանության ամրապնդման Բաքվում և նրա հաղթանակը ողջ Անդրկովկասում, բարձր գնահատանի է արժանա-ցել Ռուսաստանի Սովետական կառավարության և պարտիայի առաջնորդ Լե-նինի կողմից։ Կովկասի գործերի արտակարգ կոմիսար Ս. Դ. Շահումյանին Բաքու հղած իր հեռագրում 1918 թ. փետրվարի 14-ին Լենինը գրում է. «Մենք հրճվանքի մեջ ենք ձեր հաստատակամ և վճռական քաղաքականությու-նից։ Կարողացեք դրան միացնել այն ամենազգուշ դիվանագիտությունը, որը

անպայման թելադրվում է այժմյան դժվարագույն դրությամբ,—և մենք կհաղթենք»[3]։

1918 թ. մարտի երեսունմեկից ապրիլի 1-ը Բաքվի փողոցներում տեղի ունեցած փողոցային կատաղի մարտերում Բաքվի պրոլետարիատը և Բաքվի Սովետի զորքը՝ բոլշևիկների գլխավորությամբ, վճռական հաղթանակ տարավ մուսավաթական կոնտրռևոլյուցիայի դեմ, որը հակասովետական խռովություն էր բարձրացրել։

Այդ հաղթանակի հետևանքով ողջ իշխանությունը կենտրոնացավ Բաքվի Սովետի ձեռքում, որը դարձավ իսկական տեր Բաքվում և նրա շրջաններում։ Բաքվի պրոլետարիատը, համախմբվելով բոլշևիկյան կազմակերպությունների շուրջը, վճռական հակահարված տվեց մուսավաթական և դաշնակցական պրովոկատորներին, որոնք ձգտում էին մարտական ընդհարումների ժամանակ կազմակերպել ազգամիջյան ընդհարումներ։ Նշելով մարտյան դասակարգային մարտերի օրերին Բաքվի տարբեր ազգությունների բանվորների եղբայրական միասնությունն ու համերաշխությունը, «Բակինսկի րաբոչի» թերթը գրում էր. «Բաքվի շրջանի բանվոր դասակարգը, առանց ազգային տարբերության, կանգնած էր իր կոչման բարձրության վրա... մահմեդական, հայ, ռուս բանվորները այդ օրերին ներկայացնում էին եղբայրական մի միասնական ընտանիք։ Մենք նշում ենք այդ երևույթը որպես նշանակալից կարևորություն ունեցող փաստ։ Մենք այն համարում ենք բանվորական շարժման մեծագույն հաղթանակը Կովկասում»[4]։

Մարտյան մարտերում ձեռք բերած հաղթանակի պատմական նշանակությունը նրանում է, որ այն ամրապնդելով Սովետական իշխանությունը Բաքվում, Բաքվի պրոլետարիատին, բոլշևիկյան կազմակերպությունների գլխավորությամբ, հնարավորություն տվեց ծավալել պայքարը հանուն սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի ամբողջ Ադրբեջանում։

Մարտյան կռիվներից հետո, որը նշանավորեց Անդրկովկասում Սովետական իշխանության հաղթանակի համար մղվող պայքարում նոր էտապի անցնելը, Բաքվի սովետական զորքերի, Սովետական Ռուսաստանի օգնությամբ և տեղական աշխատավորական մասսաների մոտիկ մասնակցությամբ 1918 թ. ապրիլին Ադրբեջանի տերիտորիայի մեծ մասում՝ Բաքվի, Լենքորանի, Ջրվադի, Շամախու, Կուբինի գավառներում, ինչպես նաև Հարավային Դաղստանում հաստատվում է Սովետական իշխանություն։ Մի փոքր ուշ (1918 թ. հունիսին), համապատասխան սովետական զորամասերի դեպի արևմուտք շարժվելուն զանձակի ուղղությամբ, Սովետական իշխանությունը հաղթանակում է նաև Ադրբեջանի մի քանի այլ շրջաններում՝ ընդհուպ մինչև Գյոկչա։

1918 թ. ամռանը Ադրբեջանի մոտ 300 գյուղերի գյուղացիներ կանգնում են Սովետական իշխանության դրոշի ներքո։

1918 թ. ապրիլի 25-ին ստեղծված Բաքվի ժողկոմխորհը, որի կազմի մեջ մտնում էին Ս. Շահումյանը, Մ. Ազիզբեկովը, Ա. Ջափարիձեն, Ն. Նարիմանովը, Ի. Ֆիոլետովը, Յա. Զևինը, Գ. Կորգանովը, Ա. Կաբինյանը և այլ ականավոր բոլշևիկներ, հանդիսանում էր Սովետական իշխանության գործադիր, լիազոր, կառավարական օրգան Անդրկովկասում։ Բաքվի ժողկոմխորհի կազմը Բաքվի բանվոր դասակարգի պրոլետարական ինտերնացիոնալիզմի, մեր երկ-

[3] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 35, էջ 359։

[4] Газета „Бакинский рабочий“, № 63, 12 апреля, 1918.

րի ժողովրդի միասնության և եղբայրական բարեկամության վառ խորհրդանիշն էր։

Ադրբեջանի բոլշևիկները և նրանց կողմից ղեկավարվող Բաքվի պրոլետարիատը լավ էին գիտակցում, որ միայն Սովետական Ռուսաստանի հետ միասնական, նրա հետ սերտ դաշնակցած կարելի է ապահովել լիակատար հաղթանակը՝ Սովետական իշխանության ամրապնդումը Ադրբեջանում և ողջ Անդրկովկասում, ապահովել Ադրբեջանի և Անդրկովկասի մյուս եղբայրական ժողովուրդների ազգային անկախությունը։ Այդ բանը հաշվի առնելով, Բաքվի ժողկոմխորհը 1918 թ. մայիսի մեկի դեկլարացիայում, որպես հիմնական խնդիր, իր առաջ դնում է «...ավելի ամուր կապերի հաստատում կենտրոնական իշխանության հետ, Բաքվի բանվորության և գավառի գյուղացիական չքավորության առավել սերտ միասնություն ողջ Ռուսաստանի բանվորների և գյուղացիների հետ»[5]։

Հենվելով Սովետական Ռուսաստանի փորձի վրա և հետևելով ՌԿ(բ)Պ ԿԿ-ի, Սովետական կառավարության և անձամբ Վ. Ի. Լենինի ցուցումների վրա, Բաքվի ժողկոմխորհը իրականացնում է մի շարք կարևոր սոցիալիստական միջոցառումներ ազգայնացնում է նավթային արդյունաբերությունը, բանկերը, կասպիական առևտրական նավատորմը, մտցնում է 8-ժամյա բանվորական օր, հրատարակում է դեկրետ խանա-բեգական հողերի բռնագրավման և այն աշխատավոր գյուղացիությանը տրամադրելու մասին, ստեղծում է սովետական ապարատ, բանվորների և գյուղացիների համար կազմակերպում է դպրոցներ, իրականացնում է բանվորների աշխատանքային և կենցաղային պայմանների բարելավման միջոցառումներ։

1918 թ. Սովետական իշխանության հաղթանակը Ադրբեջանի տերիտորիայի մի մասում, Ադրբեջանի և Ռուսաստանի աշխատավորությանը հնարավորություն տվեց ամրապնդելու եղբայրական կապերը և ցույց տալու բազմակողմանի փոխադարձ ռևոլյուցիոն օգնություն։ Դա սոցիալիստական փոխադարձ օգնության օրինակ էր ժողովուրդների միջև, որոնք իրենց բախտը վերցրել էին իրենց ձեռքը։ Ռուսաստանի Սովետական կառավարությունը Լենինի գլխավորությամբ օգնում էր Ադրբեջանի աշխատավորությանը՝ նրան ուղարկելով սննդամթերք, փող, զորամասեր, ռազմական հանդերձանք և ռազմամթերք։ Իր հերթին Սովետական Ադրբեջանը Ռուսաստանին օգնում էր նավթամթերքներով։ Բաքվի պրոլետարիատը, սովետական ռեսպուբլիկայի նկատմամբ մեծ պարտականության գիտակցությամբ տոգորված, հերոսության, ռևոլյուցիոն կայունության և կարգապահության հրաշքներ էր գործում՝ նավթի համար պայքարում։ 1918 թ. գարնանն ու ամռանը Ադրբեջանից Սովետական Ռուսատան՝ արդյունաբերության և երիտասարդ Կարմիր Բանակի համար փոխադրվել է 1,300 հազար տոննա նավթ և նավթամթերքներ[6]։

Սովետական իշխանության ստեղծարար գործունեությունը Ադրբեջանում ընթանում էր քաղաքացիական կռիվների և օտարերկրյա ռազմական ինտերվենցիայի դժվարին պայմաններում։ 1918 թ. ամռանը կայսերական Գերմանիան և սուլթանական Թուրքիան՝ մուսավաթա-մենշևիկա-դաշնակցական հակառևոլյուցիայի թույլտվությամբ, օկուպացնելով Վրաստանը, Հայաստանը և

[5] Газета „Известия Бакинского совета", № 81, 1 мая, 1918.

[6] Տես А. Дубнер, Борьба бакинского пролетариата в годы революции. Баку, 1931, стр. 64

Արևմտյան Ադրբեջանը՝ միացյալ զինված հարձակում կազմակերպեցին Սովետական Բաքվի վրա։ Այդ հարձակմանը մասնակցում էին մուսավաթիստների և վրացական մենշևիկների զինված ջոկատները։ Անգլիական հետախուզության ցուցումով Բաքվում իրենց քայքայիչ գործողությունն ուժեղացնում են մենշևիկները, էսերները և դաշնակցականները՝ հրավիրելով անգլիական օկուպացիոն զորքերին՝ Բաքվի Սովետական իշխանությունը տապալելու համար։ Սովետական Բաքվի վրա կախվել էր ահեղ վտանգ։

Բաքվի բոլշևիկյան կազմակերպությունների և ՌԿ(բ)Պ Կովկասյան երկրային կոմիտեի կոչով Բաքվի բոլոր ազգությունների՝ ադրբեջանցիներ, ռուսներ, հայեր, վրացիներ, դաղստանցիներ և այլ բանվորներ ոտքի կանգնեցին Հանուն Սովետական իշխանության պաշտպանության։ Բարեկամության և ինտերնացիոնալ համերաշխության զգացմունքով համախմբված, նրանք զենքը ձեռքներին հերոսաբար մարտնչում էին Բաքվի վրա հարձակվող թուրքական օկուպանտների և նրանց մուսավաթական վարձկանների դեմ։ Սակայն ուժերը անհավասար էին։ Չնայած Բաքվի պրոլետարիատի արիությանը, Բաքվի Սովետական իշխանությունը ինտերվենտների և ներքին հակառևոլյուցիոն գերակշիռ ուժերի ճնշման տակ 1918 թ. հուլիսին պարտվում է։ Ադրբեջանում Սովետական իշխանության պարտության պատճառներից մեկն այն էր, որ արտակարգ ծանր պայմաններում գործող ադրբեջանական բոլշևիկներին չհաջողվեց այդ ժամանակ ստեղծել ամուր դաշինք Բաքվի պրոլետարիատի և Ադրբեջանի աշխատավոր գյուղացիության միջև։ 1918 թվականին Ադրբեջանի Սովետական իշխանության անկման գործում ակտիվ դեր խաղաց դաշնակա-էսերա-մենշևիկյան հակասովետական բլոկի դավաճանությունը և այն, որ Բաքվի ժողկոմսովետը չուներ բավականաչափ զինված ուժ։

Սովետական իշխանության պարտությունից և անգլիական ինտերվենտների ու նրանց էսերական վարձկանների կողմից Բաքվի 26 կոմիսարների շարանենգ սպանությունից հետո Ադրբեջանում, ինչպես և Հայաստանում ու Վրաստանում հաստատվում է բուրժուանացիոնալիստական կոնտրռևոլյուցիայի և օտարերկրյա իմպերիալիստների՝ նախ թուրքա-գերմանական և ապա անգլոամերիկյան, արյունալի տիրապետությունը։ Աշխատավորության կատաղի թշնամիներ մուսավաթ նացիոնալիստները, քողարկվելով «Անկախ Ադրբեջան» կեղծ լոզունգով, Ադրբեջանում վերացրին Սովետական իշխանության նվաճումները, հաստատեցին կալվածատերերի և կապիտալիստների ճնշումը, դաշնակների ու մենշևիկների հետ կազմակերպեցին եղբայրասպան կռիվներ Անդրկովկասի ժողովուրդների միջև։ Մուսավաթական մարիոնետային կառավարությունը, որը ղեկավարվում է իմպերիալիզմի վարձու գործակալների կողմից, Ադրբեջանը բնական հարստություններով վաճառեց նախ գերմանա-թուրքական և ապա անգլիական ու ամերիկյան գիշատիչներին։

Չնայած օկուպանտների և մուսավաթիստների դաժան տեռորին, Ադրբեջանի կոմունիստական կազմակերպությունները կազմակերպում էին բանվորների ու գյուղացիների մարտական ելույթները՝ ընդդեմ ինտերվենտների և մուսավաթական կարգերի։ Նավթային քաղաքի բանվորները՝ Ա. Ի. Միկոյանի, Ա. Գ. Կարաևի, Մ. Պեշկովի, Մ. Բ. Կասումովի և պարտիայի այլ ականավոր գործիչների կողմից գլխավորվող Բաքվի պարտիական կազմակերպության ղեկավարությամբ, հանդես բերելով հսկայական ռևոլյուցիոն ակտիվություն, մի շարք նշանակալից ելույթներ են ունենում, ինչպես օրինակ, 1918 թ. դեկտեմբե-

ի քաղաքական գործադուլը, 1919 թ. մարտի 20-ին՝ 26 կոմիսարների չարանենց սպանության կապակցությամբ տեղի ունեցած ընդհանուր ցույցը, այդ նույն թվականի մայիսին, հունիսին և օգոստոսին տեղի ունեցած ընդհանուր գործադուլները և այլն։

Ներքին և արտաքին կոնտրռևոլյուցիայի դեմ՝ Սովետական իշխանության հաստատման համար Բաքվի պրոլետարի մղած ռևոլյուցիոն պայքարի զարգացման համար մեծ նշանակություն ունեցավ 1918 թ. դեկտեմբերին ծագած Բաքվի բանվորական կոնֆերենցիան, որը հանդիսանում էր բանվորների մշտապես գործող ընտրովի օրգան և պաշտպանում էր պրոլետարիատի շահերը։ Կոմունիստական պարտիայի նշանավոր գործիչների դիպուկ արտահայտությամբ Բաքվի բանվորական կոնֆերենցիան մուսավաթական Ադրբեջանում հանդիսանում էր, կարծես թե «բանվորական պառլամենտ» (Ս. Մ. Կիրով), «մի տեսակ» սովդեպ (Ա. Ի. Միկոյան)։ 1919 թ. մարտին արդեն Բաքվի բանվորական կոնֆերենցիայի ղեկավարությունը անցնում է բոլշևիկների ձեռքը։

Հաշվի առնելով 1918 թ. դասերը, Ադրբեջանի կոմունիստները եռանդուն աշխատանք էին տանում գյուղացիության վրա բոլշևիկյան ազդեցությունը ուժեղացնելու, Բաքվի պրոլետարիատի և Ադրբեջանի աշխատավոր գյուղացիության դաշինքը ամրացնելու ուղղությամբ։ Ինտերվենտների և մուսավաթիստների դեմ ռևոլյուցիոն պայքարի ալիքը իր մեջ էր ներգրավում 100 հազարավոր գյուղացիներ։ 1919 թ. ապրիլին Լենքորանում բռնկվում է զինված ապստամբություն, որի հետևանքով Լենքորանի գավառում (Մուղանում) վերականգնվում է Սովետական իշխանությունը և գոյություն է ունենում մինչև հուլիսի վերջերը։ Այդ բանը ցույց էր տալիս, որ Սովետական իշխանության գաղափարը ամուր էր արմատավորվել Ադրբեջանական աշխատավորական մասսաների մեջ։

ՌԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեն, Սովետական կառավարությունը, Մեծ Լենինը մշտապես ուղղություն տալով Ադրբեջանի բոլշևիկների գործունեությանը, ուշադրությամբ և համակրանքով հետևում էին Ադրբեջանի և ողջ Անդրկովկասի աշխատավորության ռևոլյուցիոն պայքարին՝ այդ պայքարում նրան ցույց տալով եղբայրական օգնություն։ Ադրբեջանի կոմունիստներին մեծ օգնություն էին ցույց տալիս Գ. Կ. Օրջոնիկիձեն, որն այդ ժամանակ Ռուսաստանի հարավի արտակարգ կոմիսար էր, Ս. Մ. Կիրովը, որը ղեկավարում էր Աստրախանի հերոսական պաշտպանությունը։ Ս. Մ. Կիրովը և Գ. Կ. Օրջոնիկիձեն Բաքու էին ուղարկում մարդիկ՝ ընդհատակում աշխատելու համար, ինչպես նաև օգնում էին զենքով, փողով, զինամթերքով, հանդերձանքով և Ադրբեջանի, Վրաստանի ու Հայաստանի բոլշևիկներին հասցնում լենինյան մարտական ցուցումները։

Ադրբեջանի բոլշևիկները իրականացնելով պարտիայի Կենտկոմի, Վ. Ի. Լենինի ցուցումները ազգային հարցի վերաբերյալ, 1919 թ. գարնանը առաջ բաշեցին՝ պայքար անկախ Սովետական Ադրբեջանի համար մարտական լոզունգը, որ հսկայական դեր խաղաց Ադրբեջանի աշխատավորության համախմբման, Սովետական իշխանության նկատմամբ նրանց համակրանքն ու վստահությունը նվաճելու, Բաքվի պրոլետարիատի և Ադրբեջանի աշխատավոր գյուղացիության դաշինքն ամրապնդելու գործում։ Ադրբեջանի կոմունիստները աշխատավորական լայն մասսաներին բացատրում էին, որ ինտերվենտներին դուրս քշելով, մուսավաթական կարգերի տապալմամբ և Սովետական իշխանության վերականգնմամբ միայն հնարավոր կլինի ադրբեջանական ժողովրդի

ազատագրումը գաղութային լիակատար կեղեքման վտանգից, իսկական ազատության և անկախության նվաճումը, սոցիալական և ազգային ճնշումից ազատագրումը և պետական անկախություն հաստատելը։ Կոմունիստները միաժամանակ բացատրում էին, որ ապագա Սովետական անկախ Ադրբեջանը Սովետական Ռուսաստանի հետ պետք է լինի քաղաքական և տնտեսական սերտ կապերի մեջ։ «Անկախ Սովետական Ադրբեջան» լոզունգը Լենինի կողմից արժանացավ լիակատար քաջալերանքի։ 1919 թ. հուլիսի 19-ին ՌԿ(բ)Պ Կենտկոմի քաղբյուրոն և կազմբյուրոն Լենինի մասնակցությամբ ունեցած իրենց միացյալ նիստում որոշում ընդունեցին՝ ապագայում Սովետական Ադրբեջանը ճանաչելու որպես անկախ ռեսպուբլիկա։ 1919 թ. օգոստոսի 20-ին, Կովկասյան երկրային կոմիտեին ուղղված իր նամակում ՌԿ(բ)Պ Կենտկոմը հայտնում է, որ նա «անպայմանորեն նպատակահարմար է գտնում Ադրբեջանը ժամանակին հայտարարել անկախ սովետական ռեսպուբլիկա»[7]։

1919 թ. վերջին և 1920 թ. սկզբին մուսավաթական ռեժիմը Ադրբեջանում ապրում էր քաղաքական և տնտեսական խորը ճգնաժամ։ Ինտերվենտների և մուսավաթիստների տիրապետությունը Ադրբեջանի տնտեսությունը կատաստրոֆայի էին հասցրել։ Զրկվելով Սովետական Ռուսաստանի հետ տնտեսական կապերից, Ադրբեջանի նավթային արդյունաբերությունը կանգնել էր կատարյալ քայքայման առաջ։ 1920 թ. հունվարին Բաքվի պահեստներում կուտակվել էր ավելի քան 297 միլիոն փութ, որը արտահանվելու տեղ չուներ։ Նավթի արդյունաբերությունը 1919 թ. համեմատած 1914 թ. հետ, պակասել էր $2^1/_3$ անգամ, հասնելով 1888 թ. մակարդակին։ Արդյունաբերական շատ ձեռնարկություններ փաստորեն անգործության էին մատնված։ Ադրբեջանի բանվոր դասակարգի վիճակը անտանելի էր։ Խիստ անկում էր ապրում բանվորների ռեալ աշխատավարձը։ 10-յակ հազարավոր բանվորներ գործազուրկ էին։ 1919 թ. գարնանը գործազուրկ բանվորների թիվը Բաքվում հասնում էր ավելի քան 30 հազարի։ Կատարյալ անկում էր ապրում գյուղատնտեսությունը։ Հացահատիկային կուլտուրաների ցանքատարածությունը 1919—1920 թթ. համեմատած նախապատերազմյան մակարդակի հետ, կրճատվել էր 35—40%, խաղողի այգիների տարածությունը՝ 30%, բամբակի և բրնձի ցանքը, թթենիների տնկումը, ծխախոտի ցանքը գագարել էր, համարյա, ամբողջովին։

Օկուպանտների և մուսավաթական կոնտրռևոլյուցիայի լուծը Ադրբեջանի աշխատավորական մասսաներին դատապարտել էր մահվան ու կործանման։ Սովից և համաճարակ հիվանդություններից յուրաքանչյուր օր մահանում էին հարյուրավոր մարդիկ։ Ադրբեջանական ժողովուրդը կանգնել էր ֆիզիկական բնաջնջման սպառնալիքի առաջ։ Բավական է ասել, որ 1920 թ. Ադրբեջանի բնակչությունը, համեմատած 1914 թ. հետ, պակասել էր 29,2%[8]։

Մուսավաթական կառավարության ներքին և արտաքին ռեակցիոն քաղաքականությունը Ադրբեջանի աշխատավոր մասսաների մեջ առաջացնում էր հսկայական հուզումներ։ Կոմունիստական կազմակերպությունները վայելում էին բանվորների և գյուղացիների ճնշող մեծամասնության օգնությունը։ Ա. Ի. Միկոյանը դեռևս 1919 թ. մայիսի 22-ին Վ. Ի. Լենինին գրում էր այն մասին, որ «բացառապես միայն մեր պարտիան է կանգնած Բաքվի պրոլետարիատի

[7] „История Коммунистической партии Азербайджана", Баку, 1958, стр. 328.
[8] „Известия ЦК и БКАКП(б)", т. 1, 1922, стр. 6.

գլուխը»*։ Էսերները և մենշևիկները ամբողջապես չեզոքացված և վռնդված էին բանվորական կազմակերպություններից։ Մուսավաթիստական պարտիայում ուժեղանում էր անկումն ու քայքայումը։ Ադրբեջանական ժողովրդի լայն մասսաները հանդես էին գալիս մուսավաթական կարգերի տապալման համար։

Այսպիսով, 1919 թ. վերջին և 1920 թ. սկզբին Ադրբեջանում առկա էին աշխատավորության հաղթական ապստամբության և Սովետական իշխանության հաստատման բոլոր օբյեկտիվ պայմանները։

Ոգևորված քաղաքացիական պատերազմի ռազմաճակատներում Սովետական Ռուսաստանի վճռական հաղթանակներով, Բաքվի պրոլետարիատը, աշխատավոր գյուղացիության հետ դաշնակցած, նոր ուժով մարտի մեջ մտավ մուսավաթական ռեակցիոն կարգերի և օտարերկրյա իմպերիալիստների տիրապետության դեմ։ Օտարերկրյա ինտերվենտների և ներքին ռեակցիայի դեմ Ադրբեջանի աշխատավորական մասսաների ուժերի մոբիլիզացման գործում ղեկավար դերը պատկանում է 1920 թ. փետրվարին կազմակերպված Ադրբեջանական Կոմունիստական պարտիային՝ Սովետական Միության Կոմունիստական մեծ պարտիայի հավատարիմ ու մարտական ջոկատին։ Ադրբեջանի Կոմունիստական պարտիան ստեղծվեց ՌԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի, Վ. Ի. Լենինի ցուցումով։ Դեռևս 1919 թ. հուլիսի 19-ին պարտիայի Կենտրոնական Կոմիտեն որոշում է ընդունում Ադրբեջանի բոլոր կոմունիստական կազմակերպությունները միավորելու Ադրբեջանի միասնական Կոմունիստական պարտիայի մեջ՝ ՌԿ(բ)Պ մարզային կազմակերպության իրավունքներով։ 1919 թ. դեկտեմբերին ՌԿ(բ)Պ Կենտկոմի քաղբյուրոն վերջնականապես հաստատում է Ադրբեջանի Կոմպարտիայի ստեղծման որոշումը և առաջարկում է Կովկասյան Երկրային Կոմիտեին կազմակերպել կոմպարտիաներ նաև Հայաստանում և Վրաստանում։ 1920 թ. փետրվարի 11—13-ը ՌԿ(բ)Պ երկրկոմի որոշմամբ Բաքվում, բանվորական կենտրոնական ակումբի շենքում, անլեգալ պայմաններում տեղի է ունենում Ադրբեջանի Կոմունիստական պարտիայի առաջին համագումարը։ Համագումարին մասնակցում էին ՌԿ(բ)Պ կազմակերպությունների ներկայացուցիչները, ինչպես և «Հումմեթ» և Ադալյաթ» կազմակերպություններից՝ որոնք աշխատանք էին տանում ՌԿ(բ)Պ Բաքվի Կոմիտեի ղեկավարությամբ։ Համագումարը որոշում է ընդունում՝ Ադրբեջանի բոլոր բոլշևիկյան կազմակերպությունները միավորել Ադրբեջանի միասնական կոմունիստական բոլշևիկների պարտիայի մեջ։

ԱԿ(բ)Պ առաջին համագումարը բոլոր կոմունիստներին և աշխատավոր մասսաներին ուղղեց դեպի զինված ապստամբության նախապատրաստումը։ Համագումարի որոշման մեջ ասվում էր. «Ադրբեջանի Կոմունիստական պարտիայի համագումարը գտնում է, որ գոյություն ունեցող կառավարության տապալման և բանվորների և գյուղացիների դիկտատուրա հաստատելու համար անհրաժեշտ է նախապատրաստել բանվորների և գյուղացիների ակտիվ ելույթներ։

Ադրբեջանի Կոմունիստական պարտիայի առաջին համագումարը ամբողջ Անդրկովկասում խանա-բեգական, նացիոնալիստական և կապիտալիստական պետությունների տապալման և բանվորագյուղացիական սովետական իշխանության հաստատման համար կոչ է անում Ադրբեջանի, Վրաստանի և Հայաս-

* ՍՄԿՊ ԿԿ-ի կից Մ.Լ.Ի արխիվ, փաստաթուղթ № 4345։

տանի բոլոր բանվորներին և գյուղացիներին և հուսով է, որ Անդրկովկասի բանվոր դասակարգը և գյուղացիությունը, Բաքվի պրոլետարիատի գլխավորությամբ, պատվով կկատարեն իրենց վրա դրած պարտականությունը, պատմական իրենց մեծ պարտքը»[10]։

Համագումարից հետո եռանդուն աշխատանք է ծավալվում Ադրբեջանում գինված ապստամբություն նախապատրաստելու համար։ Ապստամբության նախապատրաստումը ղեկավարելու համար ԱԿ(բ)Պ Կենտկոմը ստեղծում է 7 հոգուց կազմված ռևոլյուցիոն շտաբ՝ Մ. Դ. Հուսեյնովի գլխավորությամբ։ Ամենուրեք կազմակերպվում էին մարտական ջոկատներ և դրուժինաներ։

Ադրբեջանի բոլշևիկների գինված ապստամբության նախապատրաստման գործունեությունը ուղղություն էր ստանում ՌԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի, Վ. Ի. Լենինի կողմից։

Հակառևոլյուցիայի դեմ մղվող պայքարում Ադրբեջանին, Հայաստանին և Վրաստանին հսկայական օգնություն ցույց տալով, ՌԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեն և անձամբ Վ. Ի. Լենինը սիստեմատիկաբար հետաքրքրվում էին ապըստամբության նախապատրաստման ընթացքով, Ադրբեջանի բոլշևիկներին որոշակի ցուցումներ էին տալիս՝ Ադրբեջանի աշխատավորական մասսաներին համախմբելու մուսավաթական կարգերի դեմ պայքարի համար՝ Հանուն Սովետական իշխանության հաստատման։ 1920 թ. մարտի 17-ին Կովկասի ռազմառևոլյուցիոն խորհրդի անունով տված իր հեռագրում Լենինը Գ. Կ. Օրջոնիկիձեին ցուցում է տալիս, որ Սովետական իշխանության հաստատումը Բաքվում ծայրահեղորեն անհրաժեշտ է։ «Ամրողջ ջանքերն ուղղեք այդ բանին, ըստ որում հայտարարությունների մեջ անպայման լինել կրկնակի դիվանագետ և առավելագույն չափով հավաստիանալ տեղական ամուր սովետական իշխանության նախապատրաստման նկատմամբ»[11]։ Կոմունիստական պարտիան, Սովետական կառավարությունը Լենինի գլխավորությամբ, դրա հետ միաժամանակ հատուկ հոգատարություն էին ցուցաբերում Կովկասի տեղական բնակչության իրավունքներն ու սովորությունները հարգելու ուղղությամբ։ Գ. Կ. Օրջոնիկիձեին ուղղված մի այլ հեռագրում, 1920 թվականի ապրիլի 2-ին, Լենինը գրում էր. «Մեկ անգամ ևս խնդրում եմ գործել զգույշ և անպայման մաքսիմալ բարյացկամություն հանդես բերել մուսուլմանների նկատմամբ, հատկապես Դաղստան մտնելիս։ Ամեն կերպ, և ընդսմին ամենահանդիսավոր կերպով ցուցադրել համակրանք մուսուլմանների նկատմամբ, նրանց ինքնավարության, անկախության նկատմամբ և այլն։ Գործերի դրության մասին հայտնեցեք ավելի ստույգ և հաճախակի»[12]։

Հաշվի առնելով Ադրբեջանում ստեղծված ռևոլյուցիոն իրադրությունը, ինչպես նաև 11-րդ Կարմիր Բանակի զորամասերի մոտենալը Ադրբեջանի սահմաններին, ՌԿ(բ)Պ Կովկասյան երկրային կոմիտեն ՌԿ(բ)Պ Բաքվի Կոմիտեին ուղղված իր դիմումի մեջ ցուցում էր տալիս, որ Բաքվի պրոլետարիատը ընդհուպ մոտեցել է բուրժուա-կալվածատիրական կառավարության տապալման և բանվորագյուղացիական իշխանության հաստատման ինդրին։ ՌԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի, Վ. Ի. Լենինի ցուցումով 11-րդ Կարմիր Բանակի հրամանատարությունը Գ. Կ. Օրջոնիկիձեի և Ս. Մ. Կիրովի գլխավորու-

[10] „История Коммунистической партии Азербайджана", стр. 347.
[11] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 35, էջ 480։
[12] Նույն տեղում, հատ. 30, էջ 630։

թյամբ և Ադրբեջանի Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեն միասին մշակում են զինված ապստամբության իրականացման պլանը, որը պետք է իրականանար Ադրբեջանի ապստամբած բանվորների և գյուղացիների և 11-րդ Կարմիր Բանակի զորամասերի կոմբինացված հարվածով։

1920 թվականին քաղաքական և տնտեսական ճգնաժամն Ադրբեջանում հասնում է իր բարձրակետին։ Բաքվի բանվոր դասակարգը, ինչպես և Ադրբեջանի գյուղացիության մեծ մասը տրամադրված էին դեպի Սովետական իշխանությունը։ Մուսավաթական կառավարությունը շփոթության մեջ էր։ Հասունացել էին հաղթական զինված ապստամբության միջոցով բուրժուակալվածատիրական իշխանության տապալման անհրաժեշտ պայմանները։ Բոլշևիկյան «Նոր աշխարհ» թերթը դեռևս 1920 թ. հունվարին գրում էր. «Հարցը պարզ է ու հասարակ։ Այստեղ հարկավոր է հաստատել սովետական իշխանություն, այդ ժամանակ հնարավոր կլինի պայքարել սովի, ցրտի և ողբ քայքայման դեմ...

Ռուսական ռևոլյուցիոն սրսցույցի համաձայն մենք ապրում ենք նախահոկտեմբերյան օրեր։»[13]։

Ադրբեջանի Կոմունիստական պարտիայի Կենտրոնական և Բաքվի կոմիտեները ապրիլի 24-ին պարտիական բոլոր օրգաններում հայտարարեցին ռազմական դրություն։ Բոլոր ջոկատները դրվեցին մարտական պատրաստության։ Ապրիլի 26-ին Ադրբեջանի Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի և ՌԿ(բ)Պ երկրկոմի Բաքվի բյուրոյի համատեղ նիստում հաստատվեց զինված ապստամբության պլանը։ Ապրիլի 27-ի վաղ առավոտյան բանվորական դրուժինաները շրջապատում են նավթահորերը և բոլոր նավահանգիստները, շրջապատում են նաև զորանոցները և ձերբակալում շատ մուսավաթ սպաների։ Ռազմական նավատորմը թնդանոթներն ուղղում է մուսավաթական կառավարության և պառլամենտի շենքին։ Այդ նույն օրը կազմակերպվում է Ադրբեջանի ռևոլյուցիոն կոմիտեն, որի կազմում մտնում էին Ն. Նարիմանովը (նախագահ), Մ. Դ. Հուսեյնովը, Գ. Մուսաբեկովը, Գ. Սուլթանովը, Դ. Բունյաթզադեն, Ա. Գ. Կարաև և Ա. Ալիմովը։ Ցերեկվա ժամը 12-ին Ադրբեջանի Կոմունիստական պարտիայի Կենտկոմի, ՌԿ(բ)Պ երկրկոմի Բաքվի բյուրոյի և բանվորական կոնֆերենցիայի նախագահության անունից դելեգացիան մուսավաթական կառավարությանը ուլտիմատում է ներկայացնում մոտակա ժամերի ընթացքում իշխանությունը հանձնելու մասին։ Մինչ մուսավաթական պառլամենտը կքննարկեր ուլտիմատումը, Բաքվի բանվորների ռևոլյուցիոն ջոկատները գրավում են քաղաքի կարևորագույն կետերը։ Ցերեկվա ժամը 2-ին կառավարական համարյա բոլոր շենքերը և կարևորագույն կետերը ապստամբների ձեռքում էր։ Ապրիլի լույս 28-ի գիշերը մուսավաթական պառլամենտը, գտնվելով լրիվ շրջապատման մեջ և զրկված ժողովրդական մասսաների օգնությունից, ստիպված էր որոշում ընդունել մուսավաթական պառլամենտը ցրելու և իշխանությունը ապստամբներին հանձնելու՝ ի դեմս Ադրբեջանի ռազմառևոլյուցիոն կոմիտեի՝ բանվորագյուղացիական ժամանակավոր կառավարության։ Այդ նույն օրը Ադրբեջանը հայտարարվում է Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկա։ Ադրբեջանի ռազմառևոլյուցիոն կոմիտեն օգնության համար անհապաղ դիմում է Սովետական Ռուսաստանի կառավարությա-

[13] Газета „Новый мир", 13 января 1920.

նը, Վ. Ի. Լենինին։ Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության ցուցումով Ադրբեջանի ապստամբած աշխատավորությանը օգնության է հասնում 11-րդ Կարմիր Բանակը՝ Ս. Մ. Կիրովի, Գ. Կ. Օրջոնիկիձեի և Ա. Ի. Միկոյանի գլխավորությամբ։

Այսպիսով, Ադրբեջանի պրոլետարիատի և գյուղացիության՝ Կոմունիստական պարտիայի կողմից գլխավորվող հերոսական պայքարի, ռուս մեծ ժողովրդի և նրա 11-րդ փառապանծ Կարմիր Բանակի եղբայրական օգնության հետևանքով 1920 թ. ապրիլին տապալվում է օտարերկրյա իմպերիալիստների և նրանց մուսավաթական վարձկանների լուծը և Սովետական իշխանությունը Ադրբեջանում հաստատվում է վերջնականապես։ 1920 թ. մայիսի 5-ին Բաքու ուղարկած իր հեռագրում Վ. Ի. Լենինը ջերմ ողջունում է Ադրբեջանական ժողովրդին՝ Սովետական իշխանության հաղթանակի կապակցությամբ։ Լենինը գրում էր. «Ժողկոմսովետը ողջունում է անկախ Ադրբեջանական ռեսպուբլիկայի աշխատավոր մասսաների ազատագրումը և հաստատ վստահություն է հայտնում, որ Ադրբեջանի անկախ ռեսպուբլիկան իր Սովետական կառավարության ղեկավարությամբ ՌՍՖՍՌ-ի հետ միասին կպաշտպանի իր ազատությունն ու անկախությունը արևելքի ճնշված ժողովուրդների ոխերիմ թշնամուց՝ իմպերիալիզմից։

Կեցցե Ադրբեջանի անկախ սովետական ռեսպուբլիկան։

Կեցցեն Ադրբեջանի բանվորները և գյուղացիները։

Կեցցե Ադրբեջանի և Ռուսաստանի բանվորների և գյուղացիների դաշինքը»[14]։

Սովետական իշխանության հաղթանակն Ադրբեջանում և Ադրբեջանական ՍՍՌ կազմակերպումը, որը հանդիսացավ Կոմունիստական պարտիայի լենինյան ազգային քաղաքականության մի նոր հաղթանակը, ունեցան պատմական հսկայական նշանակություն։ Սովետական իշխանությունը ադրբեջանական ժողովրդին ընդմիշտ ազատեց գաղութային կեղեքումից, օտարերկրյա իմպերիալիստների և բուրժուակալվածատիրական շահագործումից, ապահովեց նրա ազգային անկախությունը և պետականությունը և դրեց սոցիալիստական կառուցման հիմքերը Ադրբեջանում։ Ադրբեջանական ժողովուրդը դարձավ իր կյանքի լիիրավ տերը։

Սովետական իշխանության քառասուն տարիների գոյության ընթացքում Ադրբեջանի աշխատավորության ձեռք բերած համաշխարհային պատմական հաղթանակները Սովետական Միության Կոմունիստական պարտիայի լենինյան ազգային քաղաքականության արդյունքն է։ Կոմունիստական պարտիայի իմաստուն ղեկավարությամբ, մեծ Սովետական Միության եղբայրական ընտանիքում, Ադրբեջանական ժողովուրդը մտել է կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանը և անխոնջ պայքարում է ՍՄԿՊ 21-րդ համագումարի պատմական որոշումները, յոթնամյա պլանի հոյակապ կանխագծումները կենսագործելու՝ հանուն կոմունիզմի հաղթանակի։

---

[14] Վ. Ի. Լենին, Երկեր, հատոր 31, էջ 158։